

1486

Երկեր
Օրհուսեթի կոչուց

1901թ

83

2-56

1911

20 03

83
2-56

այս

03 AUG 2005

ՕՐԸԸԸԸԸ

5390 ա.

ՕՐԸԸԸԸԸ ԿՈՅՍԸ

1855
1001

Հազարից անհոկեց

Ս. Թ. Ը. Թ. Ը. Յ. Ե. Ը. Ը. Յ.



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Կ. Մարտիրոսյանցի տպարան | Тип. К. Мартиросянина.
Орбеляновская ул., д. № 1-2

1901

2005 014 80

38157 1/2



Дозволено цензурою.
Тифлисъ 11 Апрелья 1901 г.



Ախ, Բայմօնդ, դու ես միակ էակը,
 Որ ինձ տակաւին ընկեր ես մնացել.

 Գո՛ւ էլ ես փնտուում իմ մէջ չար ոգոյն.
 Ո՛հ, այդ ծանր է շատ... ծանր է իմ հոգոյն:

 Տեսնո՞ւմ ես ահա մայր մտաւ արև,
 Բայց հաստատ է, որ իւր պայծառ փայլով
 Վաղը նա կրկին կը տայ մեզ բարև ..

21338.60

Ֆրանսիական մի զիւղի շրջակայքում կար մի մատուռ, ուր պահուած էր Աստուածամօր պատկերը, և մատուռի մօտ կանգնած էր մի Հնադարեայ կաղնի: Իիւղացի Տիբօն խօսակցում է այստեղ երեք երիտասարդ հովիւների հետ, որոնցից իւրաքանչիւրը սիրում է նրա մի աղջկան, որոնք խնոյնպէս ներկայ են: Գերուհին, տեսնելով որ պատերազմը օրէցօր մօտենում է իրանց զիւղորայքին, Համաձայնութիւն է յայտնում աղջիկներին տալ իրանց սիրողներին և հրամայում է գնալ ու պատրաստութիւն տեսնել հարսանիքի համար: Առաջին ու երկրորդ աղջիկը հեռանում են իրանց նշանածների հետ: Իսկ ամենից փոքրը, Աննան, չի էլ մտածում երբևէ մարդու գնալու մասին: Այդ հանգամանքը խիստ անբաւականութիւն է պատճառում ճերուհուն: Եւ առհասարակ Աննայի բնաւորութիւնը վերին աստիճանի օտարօտի է թւում իւր հօրը, որը ահա թէ ինչպէս է զանգատում նրանից Աննային սիրող հովիւի, Բայմօնդի ներկայութեամբ.

Փախչում է նա միշտ ուրախ քոյրերից,
 Լեռան ամայի գլուխը բարձրանում,

Հաւը չըխօսած դուրս գամ անկողնից,
 Երբ մութ գիշերը սարսափ է ազդում,
 Եւ չէ բաժանում ոչ ոք իւր տնից,
 Ուրուականի պէս դուրս է սողում,
 Իէպ' ոգիների խաւար աշխարհը.
 Եւ ճանապարհի բաժանման կէտում
 Լեռան ոգու հետ գաղտնի խօսակցում:
 Ինչո՞ւ անպատճառ միայն այստեղում
 Երաճացնում է նա միշտ իւր հօտը,
 Յնորքների մէջ ամբողջ ժամերով
 Կռապաշտական այդ ծառի մօտը,
 Որից փախչում են ահ ու սարսափով
 Բոլոր բաղդաւոր արարածները,
 Որովհետեւ չէ երբէք ապահով.
 Այստեղ ապրում են դժոխքի քաջքերը
 Հեթանոսական խաւար օրերից:

Տիբօն երազում տեսել է Աննային՝ բազմած
 արքայական զահի վրա և կարծում է, թէ այդ
 երազը նախազգուշացնում է նրան իւր աղջկայ փա-
 ռասիրական ձգտումներից:

Նա ամաչում է ցածր վիճակից.
 Ունենալով խիստ գեղեցիկ մարմին,
 Եւ երկնային ձիրք, աչքի է ընկնում
 Մեր հովիտների աղջկանց միջին:
 Մեծ հպարտութիւն բուն դրած սրտում.
 Հպարտութիւնն է վերև երկնքից

Հրեշտակաց խմբեր ներքև գլորում,
 Հպարտութիւնն է, որի միջոցով
 Չար ոգին մարդկանց դժոխք է տանում:

Բայմօնդը սկսում է պաշտպանել Աննային,
 Թուելով նրա լաւ յատկութիւնները, բայց ի գուր...
 Տիբօն վախենում է իւր աղջկայ ապագայից և զգու-
 շացնում է նրան ոգիների հետ գործ ունենալուց:

Այդ միջոցին մօտենում է նրանց գիւղացի Բէր-
 տրանը, որ քաղաքից է գալիս: Նրա ձեռքին մի
 սաղաւարտ կայ, որը խիստ շարժում է Տիբօյլի հե-
 տաքրքրութիւնը: Բէրտրանը պատմում է, թէ ինչ-
 պէս քաղաքում մեծ շփոթութիւն է տիրում՝ պա-
 տերազմի դաշտից ստացուած տիւուր լուրերի պատ-
 ճառով և թէ ինչպէս փողոցներում մեծ բազմու-
 թիւն է շարժուում: Այդ խառնաշփոթութեան ժա-
 մանակ մէկ գնչու կին կամեցել է Բէրտրանին զօ-
 ուով ծախել այդ սաղաւարտը: Բէրտրանը հազիւ
 ձեռքն է վերցրել սաղաւարտը նայելու, երբ շար-
 ժուող ամբոխի ահեղ ալիքը քշել-հեռացրել է գըն-
 չուհուն և սաղաւարտը ակամայ մնացել է Բէրտրա-
 նի ձեռքին: Այդ խօսքի վրա Աննան խլում է
 Բէրտրանի ձեռքից սաղաւարտը, բացականչելով թէ
 նա իւր համար է ուղարկուած: Ապա Բէրտրանը,
 լսածների հիման վրա, պատմում է, թէ ինչ ծանր
 դրութեան մէջ է Փրանսիան: Թշնամին արդէն
 խլել է երկրի մեծ մասը և այժմ պաշարել է Օր-

լէանը: Թշնամու հետ տարաբաղդաբար միացած է
 և Ֆրանսիայի հարազատ որդին, Բուրգունդիայի
 դուքսը, իւր գորքերով և նոյնպէս Ֆրանսիական
 թագաւորի դաւաճան մայրը, որը կամենում է օտա-
 րի օգնութեամբ գահընկեց անել հարազատ որդուն:
 Արդէն կրած պարտութիւնների ազդեցութեան տակ՝
 հաւատարիմ մնացած Ֆրանսիական զօրքը կորցրել
 է եռանդն և ինքնավստահութիւնը: Սարսափը
 տիրապետել է նոյն իսկ քաջ զինուորականների
 սրտին: Ի գուր է անցնում զօրապետների խրախոյսը-
 զինուորները փախչում են թշնամու առաջ գառնե-
 րի պէս: Ֆրանսիայի բոլոր յոյսերը կորած են և ար-
 դէն խօսք է բացուած հաշտութեան մասին: Հաշ-
 տութեան անունից զայրանալով, Աննան բացական-
 չում է.

Հաշտութեան մասին պէտք չէ խօսք լինի,
 Զինուած զալիս է քաջ աղատիչը.
 Թշնամու բաղդը շուտ Օրլէանի
 ձրջակայքումը փշրուած կ'լինի:
 Բաժակը լցուած է և հունձը հասած.
 Գալիս է կոյսը մանգաղը բռնած՝
 Թշնամու առատ արտն հնձելու,
 Ատողերին հասած փառքը ջնջելու:
 Մի՛ վախէք բնաւ, այլ հաստատ կացէք.
 Մին՝ և որ դարին դեղնէ հանդերում,
 Լօ՛ւնը լրանայ—հաստատ իմացէք,
 Մի՛ հատ թշնամի չի՛ մնայ Ֆրանսիայում,

Եւ անզլիացու հօր ձիերը
 Կը դադրեն խմել Լուարի ջրերը...

Փսկ երբ Բէրտրանը նկատում է, թէ այլևս հրաշք-
 ներ չեն կատարում աշխարհքում, Աննան պատաս-
 խանում է.

Թուչելով կը գայ ձերմակ աղանին,
 Արծիւի նման անվախ-համարձակ,
 Եւ կը յօշոտէ այդ բաղէներին,
 Որ հայրենիքը քանդում են արձակ:
 Ազգին գաւաճան՝ հպարտ իշխանին
 Նա կը ենթարկէ արժանի պատժին:
 Երկինք ու երկիր քարուքանդ անող
 Յանդուգն սանձարձակ մեր թշնամիներ
 Կը ցրուէ, որպէս խղճալի գառներ:
 Թէև նա ինքն մի խեղճ արարած,
 Բայց նրա հետ է կենդանի Աստուած,
 Որ մի խղճալի կոյսի թոյլ ձեռքով
 Կը հանդիսանայ իւր պայծառ փառքով:

Տիրօն ու Բայմօնդը զարմանում են Աննայի
 խօսքերի վրա և նրա ողևորութիւնը բացատրում
 են սաղաւարտի ազդեցութեամբ: Աննան շարունա-
 կում է.

Պիտի կործանուի այդ պետութիւնը,
 Դրախտանման զեղեցիկ երկիր,
 Որին սիրում էր Աստուածութիւնը,

Աչքի բերբ պէս: Պիտի կրէ նա
 Միշտ օտար ազգի գուռ շղթաները:
 Օտար իշխանը հեռուից եկած,
 Որի նախնիքը մեզ մօտ չեն թաղուած,
 Որի ականջին խորթ է մեր լեզուն,
 Մեզ հետ չի անցրել անմեղ մանկութիւն,
 Ինչպէս պիտ' անէ նա մեզ հայրութիւն:

Ապա Տիբօն խնդրում է Աստուծուն, որ ողորմէ Փրանսիային: Նա մխիթարում է այն յուսով, որ պատերազմը դադարելուց յետոյ, քարուքանդ եղած երկիրը նորից կը ստանայ իւր բարգաւաճ գրութիւնը: Ամենքը գնում են, մենակ թողնելով Աննային: Իսկ սա աւելի ու աւելի սիրտ առնելով, վերջապէս որոշում է ի կատար ածել իւր վաղուցուայ մտադրութիւնը, այսինքն նուիրուել հայրենիքի ազատութեան գործին:

Մնաք բարև, լեռներ, և դուք արօտներ,
 Դուք իմ սիրելի խաղաղ հովիտներ,
 Ձեզի տեսութեան այլևս չեմ գալու,
 Եկել եմ վերջին բարևս տալու:
 Դու մարգագետին, որ ես ջրեցի,
 Դուք սիրուն ծառեր, որ ես տնկեցի,
 Աճեցէք ուրախ: Մնաք բարև ձորեր,
 Մառն աղբիւրներ: Եւ դու արձագանք,
 Հովտի աղնիւ ձայն, դու էլ մնաս բարև.
 Աննան գնում է, գնում է անդարձ:

Խաղանդ անկիւններ իմ ուրախութեան,
 Մենակ եմ թողնում ես ձեզ յաւիտեան:
 Անտէր—անպաշտպան իմ իղձուկ գառներ,
 Յիր ու ցան եղէք, անտառը փախէք:
 Ուրիշ տեսակ հօտ պիտ' արածացնեմ
 Արիւնշաղախ կարմիր դաշտերում,
 Երկիթային ունայն ցանկութիւն չունեմ,
 Հոգոյ հրամանն եմ միայն կատարում:

Նա որ Քորբերի լեռների վրա
 Վառուած թփիցն Մովսէսին կոչեց,
 Եւ Փառաւօնի մօտն ուղարկեց:
 Նա, որ Հեսէյի երկիւղած որդուն,
 Դեռահաս հովվին, իւր գործիք դարձրեց—
 Նա որ սիրում է միշտ հովիւներին,
 Այդ ծառի ճիւղից ինձ հրաման տուեց.
 «Գնա՛, վկայի՛ր դու ինձ աշխարհին».

«Կարծր մետաղից դու հագուստ հագիր,
 Եւ քնքոյշ կուրծքդ պողպատով պատիր,
 Որ նենգ կրակն ունայն աշխարհի
 Անարատ սիրտդ երբէք չի այրի:
 Պսակ հարսնական մազիդ չի՛ դպչել,
 Քնքոյշ մանուկը կրծքիդ չի՛ կպչել,
 Բայց զինուորական փառք ու պարծանքով—
 Քեզ կը պսակեմ իմ հօր ձեռքով»:

II.

Այժմ տեսնենք, թէ ինչ էր կատարուում այդ ժամանակ թագաւորի բանակում: Կոմս Գիւնուան Հեռաւոր Նորմանդիայից եկել է, որ միանալով թագաւորի Հետ, ազատէ Օրլէանը: Նա յոյս է ունեցել՝ թագաւորին պատրաստ գտնել ճակատամարտի համար, բայց տեղ հասնելով տեսնում է, որ թագաւորը անհոգ կերպով իւր ժամանակը անցուցանում է երգիչներին ականջ դնելով և իւր սիրուհու համար խնջոյքներ կազմելով: Կոմսը զայրացած գանգատուում է Գիւնուանի դանձապահի ներկայութեամբ և մտածում է հրաժարական տալ: Այդ միջոցին թագաւորը գալիս է և Գիւնուանի հրամայում է՝ երգիչներին ճանապարհ գցել մի-մի ոսկեայ շղթայ նուիրելով: Բայց դանձապահը բացատրում է, թէ թագաւորի դանձարանը դատարկուած է, թէ նոյն իսկ արքունական բոլոր եկամուտները և մաքսերը արդէն գրաւ են դրուած: Ինչպէից օգտուելով կոմսը մի քանի սուր նկատողութիւններ է անում թագաւորին, թէ նա աւելի սիրային հարցերով է զբաղուում, քան թէ երկիրը վտանգից ազատելու մասին մտածում:

Ով գեղեցկութեան պաշտպան լինելու Քաջութիւն չունի, արժանի չէ և Ստանալու նորա ոսկեղէն պարգև: Մտի՛ր ասպարէզ և քո հայրերի

Թագը պաշտպանի՛ր ասպետի սրով,
Պաշտպանի՛ր ազնիւ կնոջ պատիւը,
Ապա իրաւունք կունենաս սիրով,
Քո իշխանական զարդարել գլուխը:

Այդ միջոցին ներկայում են թագաւորին Օրլէանից եկած պատգամաւորները, որոնք նկարագրելով պաշարուած քաղաքի յուսահատ վիճակը, խնդրում են շուտափոյթ օգնութիւն հասցնել: Միևկողմից էլ լուր է ստացուում, թէ զօրքերի մի կարևոր զուեղը սպառնում է ապստամբուել, եթէ անմիջապէս իւր վարձը չըստանայ: Սրա վրա աւելանում է և մի ուրիշ ծանր հանգամանք: Թագաւորը ուղարկել էր Լա-Հիր զօրապետին Բուրգունդական դքսի մօտ, համոզելու նրան, որ հաշտուէ թագաւորի Հետ: Բայց ահա գալիս է Լա-Հիրը և պատմում է իւր պատգամաւորութեան անյաջողութիւնը. դուքսը կտրական կերպով պատասխանել է, թէ յառաջ քան որևէ խօսք բացել հաշտութեան մասին, պիտի յանձնեն նրա ձեռքը Գիւնուանին, նրա հօրը սպանողին: Բացի այդ՝ Լա-Հիրը պատմում է, թէ ինչպէս արդէն Փարիզում գահ են բարձրացրել մանուկ Լանկաստրին և թէ ինչպէս թագաւորի հարազատ մայրը թշնամու բանակի մէջ քանդում է նրա ոտների տակը: Թագաւորը բոլորովին յուսահատուելով, ճանապարհ է դնում Օրլէանի պատգամաւորներին ասելով, թէ ինքը ոչ մի օգնութիւն չէ կարող հասցնել նրանց: Ինքն էլ որոշում է փախ-

չել Լուարա գետի միւս կողմը, անտէր թողնելով
 համարեա ամբողջ երկիրը: Կոմս Գիւնուան բարկա-
 ցած դուրս է գնում: Գիւ-Ղատէլը նորից յայտնուե-
 լով խնդրում է, որ թագաւորը յանձնէ իրան Բուր-
 գունդական դքսի ձեռը և հաշտուէ նրա հետ.
 այդպիսով նա կամենում է ակնյայտնի կերպով կոր-
 ցնել իւր կեանքը, միայն թէ հայրենիքը նեղ դրու-
 թիւնից դուրս գայ: Թագաւորը չէ համաձայնում
 և հրամայում է անյապաղ իւր կահ-կարասիքը նաւը
 տանել՝ փախչելու համար: Ահա յուսահատութեան
 այդ վերջին վայրկեանին, մի նոր տեղեկութիւն է
 ստացւում պատերազմի դաշտից և ամեն բան նոր
 կերպարանք է առնում...

III.

Պատերազմի դաշտից մէկ սուրհանդակ է գա-
 լիս և ուրախ աւետիք է բերում, թէ Ֆրանսիական
 զօրքը մի շատ նշանաւոր յաղթութիւն է տարել:
 Ամենքը զարմացած են և դժուարանում են հաւա-
 տալ, որովհետև այդպիսի բան ոչոք չէր սպասում:
 Աւստի սուրհանդակը պատմում է բոլորը թագաւորի,
 արքեպիսկոպոսի և իշխանների ներկայութեամբ.

Տասնևվեց դունդ զօրք Լօտարինգիայից
 Գալիս էինք քո զօրաց օգնութեան,
 Եւ հազիւ իջած բարձր լեռներից,
 Հանդիպեցինք մենք անվերջ բազմութեան

Թշնամու զօրաց: Մի ուրիշ զօրք էլ
 Մեր յետքում տեսանք: Պաշարուած էինք
 Մենք ամեն կողմից: Աւրեմն ինչ անել.
 Յաղթել չենք կարող և ոչ էլ փախչել:
 Զօրապետները խորհուրդ կազմեցին,
 Բայց ի դուր ջանքեր, չկար մի հնար,
 Բաջ զինուորները յուսահատուեցին,
 Կորած էինք, թէ երկինք չը խղճար...

Անտառի խորքից դուրս թռաւ մի կոյս,
 Որ պատերազմի աստուածուհու պէս,
 Դէմքը զեղեցիկ, շուրջը սլայծառ լոյս,
 Սև գանգուրները ուսերին թափած,
 Դիւին մետաղեայ սաղաւարտ հագած:
 Զօրքին դիմելով նա բացականչեց.
 «Դէպ՛ յառաջ, քաջեր, ինչ էք վախենում:
 Թէկուզ թշնամին ծովի աւազից
 Բազմաթիւ լինի, մի վախէք նրանից,
 Աստուած և սուրբ կոյսն ձեր առջև են գնում»:

Եւ դրօշակակրից դրօշը խլեց,
 Անվախ-անվեհեր դէպ՛ յառաջ վազեց:
 Իսկ մենք սիրտ առած, զարմանքից ապշած,
 Ծածանուող դրօշի յետքիցն ընկած,
 Թշնամու վրա նետուեցինք յանկարծ:
 Իսկ այդ չը տեսնուած հրաջքից սարսափած
 Սուր ու հրացան դէս ու դէն գցած
 Փախաւ թշնամին, ցրուեց դաշտերում:

Ջօրպատները ո՛չ մի խրախոյսով
 Յետ պահել գօրքին չէին կարենում:
 Թէ ձի թէ զինուոր գլուխը կորցրած,
 Երկնային կոյսի սրից սարսափած
 Յուսահատութեամբ գետն էին նետուում
 Եւ սառ ջրի մէջ հոգին աւանդում:

Չուտով գալիս է ինքն կոյսը, որը ընդունուում է ժողովրդի կողմից մեծ ցնծութեամբ ու ոգևորութեամբ: Թագաւորը սկզբում գժուարանում է հաւատալ, թէ իւր երկիրը պիտի մի աղջկայ ձեռքով ազատուի, և թէ նա Աստուածանից է ուղարկուած, ուստի հրամայում է կոմս Գիւնուային մի ըուպէ նստել գահի վրա, տեսնելու համար, թէ արդեօք կոյսը կը հասկանայ այդ: Աննան ներս մտնել բանին յանդիմանում է գահի վրա նստած կոմսին և հրամայում է վերկենալ տեղից: Կոմսը վեր է կենում և թագաւորը նստում է գահի վրա: Թագաւորի հարցին, թէ ինչպէս կարողացաւ ձանաչել իրան, կոյսը մարգարէական պատասխան է տալիս: «Ես տեսայ քեզ, երբ Աստուծոյ առաջ չոքած աղօթք էիր անում: Աղօթքիդ մէջ խնդրում էիր Աստուածանից Հետեւեալը: Եթէ այդ երկրի վրա ծանրանում է քո նախորդների ժամանակ կատարուած մի յանցանք, ապա թող Աստուած ժողովրդի փոխարէն քեզ պատժէ: Իսկ եթէ նա կամենում է խլել քո ցեղից իշխանութիւնը և ամենայն իրաւունք, թող չըզրկէ


քեզ երեք բանից՝ խղճմտանքից, անկեղծ բարեկամներից և քո ընտրածի սիրուց»: Թագաւորի սիրտը շարժուում է. նա լաց է լինում ամենքի առաջ: Ապա արքեպիսկոպոսը հարցնում է Աննային նրա ո՞վ լինելը և Աննան պատմում է իւր բոլոր անցեալը, ի հարկէ և ծառի ճիւղերի պատմութիւնը:

Մի անգամ, երբ ես երկար գիշերը
 Ջերմեւանդ սրտով այդ ծառի տակին
 Նստած, քնի դէմ մաքառում էի,
 Սուրբ կոյսը յանկարծ դրօշակը ձեռքին,
 Հովիւ աղջկայ պարզ շորեր հագած,
 Իմ առաջ կանգնեց և այսպէս ասաց.
 «Ես եմ, իմ Աննա, վեր կաց, թող հօտը
 Կանչում է քեզ Տէրդ ուրիշ պաշտօնի,
 Ա՛ռ այդ դրօշակը, կապի՛ր այդ սուրբ
 Քնն, ազատի՛ր իմ ժողովուրդը...»

Մի անարատ կոյս աշխարհի վրա
 Մեծ արժէք ունի, եթէ կամենայ
 Սիրտը մարմնաւոր սիրուց ազատել
 Եւ մեծ գործերին կեանքը նուիրել:
 Նայի՛ր, ես էլ իբր անարատ մի կոյս
 Ծնեցի Տիրոջ, մարդկանց կեանքի լոյս»:

Արքեպիսկոպոսը հաւատում է Աննայի պատգամաւորութեան, հիմնուելով նրա պատմած հրաշքների վրա: Իսկ կոմս Գիւնուան, աւելի դրական հասկացողութիւն ունենալով, ասում է.

1002
 538



Ես հաւատում եմ ոչ թէ հրաշքներին,
կոյսի աչքերին եմ հաւատում ես.

Նրա հայեացքի սուրբ անմեղութեան:

Թագաւորը Հարցնում է, թէ արդեօք ինքն
իրաւ պիտի յաղթէ թշնամուն և թէ իսկապէս
թշնամին պիտի չը խլէ Սրլէանը: Աննան զրական
պատասխան է տալիս: Զօրապետների խօսքին լսե-
լով թագաւորը նշանակում է Աննային բոլոր զօր-
քերի հրամանատար և առաջարկում է նրան հրա-
ժարուած սպարապետի սուրբ: Իսկ Աննան հրաժա-
րուելով այդ սրից յայտնում է, թէ այս-ինչ հին
քաղաքի գերեզմանատան մատուռի մէջ մի հին
սուր է պահուած, որի վրա երեք ոսկեղէն շուշան
է դրոշմած, և խնդրում է բերել տալ այդ սուրը:
Իսկոյն կատարուում է նրա պատուէրը: Բացի այդ
նա պահանջում է հետևեալը.

Հրամայիր տան ինձ մի սպիտակ դրօշ,

Վրան ծիրանի շրջանակ քաշած.

Չրջանակի մէջ սուրբ կոյսը որոշ,

Յիսուս մանուկն էլ իւր կրծքին կպած:

Այդպէս էր դրօշը, որը ցոյց տուեց,

Աստուածամայրը երբ ինձ յայտնուեց:

Այդ ժամանակ գալիս է թագաւորի մօտ մէկ
պատգամաւոր թշնամու բանակից և առաջարկում
է հաշտութիւն կապել, քանի դեռ Սրլէանը չեն

խլել Փրանսիայից: Աննան թագաւորից խօսելու իրա-
ւունք ստանալով պատասխանում է թշնամուն.

Հաշիւ տուէք դուք երկնից Աստուծոյն

Այն արեան համար, որ դուք թափել էք:

Բանալիները լեւ դարձրէք իսկոյն

Մեր քաղաքներին, որ դուք խլել էք:

Եւ լաւ իմացէք՝ Մարիամի որդին

Փրանսիան չի յանձնիլ օտարի կամքին:

Գնա՛, շտապիր, երբ տեղ կը հասնես,

Յաղթական դրօշը տնկած կը տեսնես,

Եւ Սրլէանը իւր տիրոջ ձեռքին:

IV.

Այժմ մենք էլ գնանք պատերազմի դաշտը:
Յրլէանի շրջակայքում, ժայռերով շրջապատուած մի
հովտի մէջ, հանդիպում ենք մենք անգլիական
զօրապետներին, որոնք այդ օրը խիտտ պարտութիւն
կրած լինելով, այժմ աշխատում են անբաղդութիւնը
միմեանց վրա դցել: Տալբօն և Լիօնէլը մեղադրում
են Բուրգունդիայի դքսին, թէ ամենից առաջ նրա
զօրքերն են սկսել փախչել, վախենալով մի չնչին
աղջկանից: Բայց դուքսը պնդում է, թէ ամենքն
էլ են փախել, և առաջարկում է միխթարուել այն
մտքով, որ իրանք յաղթուել են ոչ թէ մարդկան-
ցից, այլ սատանայից: Յամենայն դէպս Լիօնէլը
հաւատացած է, որ եթէ անգլիացիք մենակ լինէին,

այսինքն եթէ դուքսը նրանց հետ չ'լինէր, նրանք
 երբէք չէին կորցնիլ Օրլէանը: Իսկ դուքսը շատ
 սուր կերպով պատասխանում է, թէ նրանք իսկի
 երբևիցէ Օրլէանը տեսած էլ չէին լինի, որովհետև
 Ֆրանսիացին յաղթում է միայն Ֆրանսիացու ձեռ-
 քով. «Ով հարթեց ձեր ճանապարհը դէպի մեր եր-
 կիրը: Ո՞վ բարեկամական ձեռ մեկնեց դէպի ձեզ,
 երբ դուք ափ իջաք ձեզ համար օտար երկրում: Ո՞վ
 թագադրեց Փարիզում ձեր Հենրիկոսին և ո՞վ դար-
 ձրեց դէպի ձեզ Ֆրանսիացոց սիրտը: Աստուած է
 վկայ. եթէ իմ զօրեղ ձեռքը ներս չը բերէր ձեզ,
 դուք երբէք չէիք կարող տեսնել, թէ ինչպէս է
 բարձրանում ծուխը Ֆրանսիական տան ծխնելոցից»:
 Վիճաբանութիւնը բաւական լուրջ կերպարանք
 ստանալուց յետոյ դուքսը հրամայում է իւր ասպե-
 տին զօրքը պատրաստել իւր երկիրը վերադառնալու
 համար: Բայց շուտով գալիս է դաւաճան թագու-
 հին, Իզաբօն, և նորից հաշտեցնում է վիճաբանող-
 ներին ընդհանուր շահերի անունով: Ապա Իզաբօն
 խօսք է բացում պատերազմի դրուժեան մասին: Նա
 յայտնում է այն միտքը, թէ Կարլոսը լուսահա-
 տուած լինելով երկնքի պաշտպանութիւնից, սատա-
 նային է օգնութեան կանչել: Թշնամու բանակը
 առաջնորդողը մի կին է, որի ներկայութիւնից զօր-
 քերը ոգևորում են, ուստի Իզաբօն կը կամենար
 ինքն էլ զօրքերի հրամանատարը դառնալով, կոյսի
 նման ազդել նրանց վրա: Բայց զօրապետները հաս-

կացնում են Իզաբօնին, թէ աւելի լաւ կլինի, որ
 նա վերադառնայ Փարիզ և հանգիստ նստէ, որով-
 հետև նրա ներկայութիւնից զօրքերը աւելի վհա-
 տում են, կարծելով թէ իրանց թափած արիւնը
 նրա չար նպատակին է ծառայելու: Պառաւի գնա-
 լուց յետոյ զօրապետները խորհուրդ են անում, թէ
 այժմ գործին ինչ ընթացք տան: Նրանք այն կար-
 ծիքի են, թէ իրանց կրած պարտութեան պատճառը
 լոկ այն սարսափն է, որ յառաջացնում է զօրքի
 մէջ կոյսի անունը: Ուստի Տալբօն հարկաւոր է հա-
 մարում, որ իրանցից մէկը անձամբ կուր բռնուէ
 կոյսի հետ, որը անշուշտ կամ կը սպանուի, կամ
 խոյս կը տայ, կը փախչէ, և այդպիսով նրա անունը
 կը կոտորուի զօրքի մէջ: Լիօնէլը ինքնավստահու-
 թեամբ խոստանում է ողջ և առողջ բռնել նրան և
 բանակը բերել զօրքի զուարճութեան համար: Ապա
 որոշում են քնել ու հանգստանալ մինչև լուսաբաց,
 որից յետոյ պիտի առաջնորդեն զօրքերը դէպի թըշ-
 նամու բանակը: Գնում են քնելու, հաւատացած
 լինելով, թէ թշնամին ո՞չ մի հնար չունի գիշերով
 այդտեղ հասնելու:

Բայց իրականութիւնը ուրիշ բան է ցոյց տա-
 լիս: Հէնց որ նրանք գնում են, յայտնում է Ան-
 նան Ֆրանսիական զօրապետների ու զօրքերի հետ
 միասին: Նա հրամայում է՝ իսկոյն ջահեր վառել և
 թշնամու վրանները հրդեհել, որպէս զի նրանց բա-
 նակի մէջ խառնաշփոթութիւն ընկնի: Միաժամա-

նակ, սարսափը աւելի սաստիկ անելու համար, նա հրամայում է բացականչել Աստուծոյ և սուրբ կոյսի անունը: Ապա զօրապետները շնորհակալութիւն յայտնելով կոյսին, որ խաւար գիշերով կարողացաւ նրանց ներս բերել թշնամու բանակի կենտրօնը, խնդրում են, որ նա ինքն սուրբ վայր դնէ, չը կուէ, մի գուցէ որևէ վտանգի ենթարկուէ: Նրանց կարծիքով բաւական է միայն, որ կոյսը դրօշակը ձեռքին առաջնորդէ նրանց: Բայց զօրապետների խնդիրքին Աննան պատասխանում է իրան յատուկ մարգարէական ոճով.

Ո՛վ է կարող ինձ արգելքներ դնել
 Եւ հոգոյ համար ծրագիրներ կազմել.
 Նետը սլանում է դէպի այն կողմը,
 Ուր ուղղում է նրան նետաձգի ձեռքը:
 Ուր վտանգ է տիրում, այնտեղ է Աննան.
 Օրը չէ հասել դեռ նրա անկման:
 Ոչ ոք չի փոխիլ նրա ընթացքը,
 Մինչև գլուխ չ'գայ Աստուծոյ կամքը:

Այդ ասելով Հերոսուհին հեռանում է և նրան հետևում են զօրապետները: Փոքր չետոյ թշնամու զինուորները սկսում են փախչել, միմեանց հաւատացնելով, թէ կոյսը կարողացել է բանակը մտնել օդի միջով: Մի զինուոր նոյն իսկ Տալբօյին էլ խորհուրդ է տալիս փախչել կոյսի առջևից, և այդ խորհուրդից զայրանալով Տալբօն տեղն ու տեղը սպանում է նրան:

Ապա մեր առաջ բացում է բոցավառուած բանակը: Մի անգլիացի ասպետ կամենում է փախչելով ազատուել կոյսի սրից: Բայց տեսնելով, որ փախչողներին իրանց զօրապետի հրամանով սպանում են, ճարահատեալ կանգ է առնում: Աննան մօտ է գալիս և ասպետը, ընկնելով նրա ոտները, աղերսում է չը սպանել իրան: Երիտասարդ ասպետը խնդրում է խղճալ իւր ծնողներին, մանաւանդ դեռահաս հարսնացուին, որ սպասում է նրան: Ասպետի հայրը շատ հարուստ կալուածատէր է, լիսունից աւելի հարուստ գիւղեր ունի. նա մեծ փրկանք կըվճարէ իւր որդոյ կեանքը բախշելու համար: Բայց կոյսը անողոք է. նա չը պիտի խնայէ ոչոքի, որին դուրս կը հանէ նրա հանդէպ պատերազմի աստուածուհին.

Ծնողների անունովն ես դու խօսում,
 Տարաբնորդ մարդ, բայց ինչո՞ւ ես մոռանում,
 Որքան մայրիւր մեր երկրի մէջ անզաւակ,
 Որքան որբեր առանց հայր էք դուք թողնում:
 Որքան սիրուն հարսնացուներ ձեր ձեռքով
 Մնացել են անտէր և անապահով:

Իսկ ասպետի զանգատին, թէ շատ ծանր է օտարութեան մէջ մեռնելը, Հերոսուհին պատասխանում է.

Ո՛վ է կանչել ձեզ այդ օտար երկիրը,
 Ո՛վ է խնդրել փչացնել մեր արտերը,
 Մեր սեփական հողիցն մեզ դուրս անել,

Մեր սրբազան քաղաքներն կործանել:
 Ինչո՞ւ դրիք դուք ձեր ունայն սրտերում:
 Փրանսիացուն գերի դարձնել իւր երկրում:
 Հալածուածի համբերութիւնն հատել է,
 Վրիժառուութեան ժամը արդէն հասել է:

Ասպետը տեսնելով որ ոչ մի կերպով չէ կարողանում շարժել հակառակորդի սիրտը, նորից ձեռքն է առնում սուրը և յարձակում է գործում, բայց կոյսի սրի հարուածից իսկոյն վայր է ընկնում ու մեռնում: Այդպիսով շարունակ յաղթութիւններ տանելով, Հերոսուհին ինքն էլ զարմանում է իւր ոյժի վրա.

Սուրբ կոյս, դ՞ու ես ինձ գորութիւն տալիս,
 Ոյժ ես ներշնչում անգոր բազուկիս:
 Սարսափում էի ես սուր տեսնելիս,
 Ձեռքերս դողում և սիրտս լալիս:
 Մարդու մարմինը անշունչ ընկնելիս,
 Իբր Աստծոյ տաճար լինէր քանդուելիս:
 Բայց երբ կարիքի բոպէն է գալիս,
 Կարծես թէ սրիս ոգի են տալիս:
 Նա ինքն իրան գործում է ինչպէս
 Յարմար է գտնում, շունչ կենդանու պէս:

Ասպետին սպանելուց յետոյ կոյսը հանդիպում է Բուրգունդիայի դքսին, որը մտադիր է յարձակուելու նրա վրա: Բայց անմիջապէս վրա են հասնում կոմս Գիւնուան և Լա-ձիրը, որոնք կամենում

են կռուել դքսի հետ կոյսի փոխարէն: Սակայն Հերոսուհին մէջ է մտնում և անջատում է նրանց ասելով, թէ կռուողը ինքն պիտի լինի, միայն թէ նա կռուելու է այս անգամ մի բոլորովին ուրիշ գէնքով, և դառնալով դէպի դուքսը ասում է. «Ի՞նչ ես ուզում, դուքս, ո՞վ է քո թշնամին: Մենք ամենքս քեզ ենք պատկանում: Մենք պատրաստ ենք միշտ քեզ ընդունելու և մեր ծունկերը պատրաստ են քեզ մեծարելու: Բու՞թ է քո դէմ մեր սուրը, որովհետև դու մերն ես: Ինքն երկինքը Փրանսիայի կողմն է. նրա հրեշտակները, որոնց սակայն դու չես տեսնում, կռուում են մեր թագաւորի համար: Լոյսի նման իրաւացի ու պայծառ է մեր գործը, որպէս ահա այդ դրօշակը: Դքսի սիրտը սկսում է կակղանալ, ուստի նա կարծելով թէ իրան շուրեցնում են դժոխային խաբուսիկ խօսքերով, կամենում է անյապաղ կռիւն սկսել ասելով.

«Զգում եմ, որ ականջս աւելի թոյլ է, քան բազուկս»: Սակայն Հերոսուհին շարունակում է.

«Խաղաղութիւն գցելը և հաշտեցնելը մի՞թէ դժուր է գործն է: Մի՞թէ տարտարոսից կարող է հաշտութիւն բղխել: Եւ ի՞նչ աւելի անմեղ, սուրբ ու մարդավայել բան կայ աշխարհիս երեսին, քան թէ հայրենիքի ազատութեան համար մղուող կռիւր: Ե՞րբ է տիեզերքը այնպէս կերպարանափոխուել, որ երկինքը յանձնէ իւր արդար գործը դժուրին, այսինքն սատանաների պաշտպանութեան: Իսկ եթէ

այն, ինչոր ես ասում եմ, ճշմարտութիւն է, որտեղից կարող եմ ես ստացած լինել իմ զօրութիւնը, եթէ ոչ երկնքից»:

Անարատ կոյսի սուրբ խօսքերը վերջապէս շարժում են դքսի սիրտը, զէնքը թուլանում է նրա ձեռքին: Նկատելով այդ, հերոսուհին մի կողմն է դնում իւր սուրը ու դրօշակը և զրկում է դքսին: Նրա օրինակին հեանում են և զօրապետները:

V.

Թագաւորի բանակը գտնում ենք այժմ Մարն գետի վրա: Գիւնուան և Լա-Հիրը, որոնք երկուսն էլ սիրահարուած են Աննայի վրա և կը կամենային նրա ամուսինը դառնալ, խօսակցում են այն մասին, թէ ինչ ընթացք տան գործին, որ իրանց փոխադարձ բարեկամութիւնը չը խախտուի: Լա-Հիրը նրկատում է, թէ կոմսը արքայական արիւն ունենալով իւր երակների մէջ, չէ կարող կապուել մի հասարակ գիւղացու աղջկան հետ: Բայց կոմսը պատասխանում է.

Նա էլ սուրբ բնութեան ծնունդ լինելով,
Մեզի հաւասար կարող է կոչուել,
Եւ հրեշտակուհու պատկեր կրելով,
Իշխանի արիւնն չի ստորացնել:
Չէ որ նրա շուրջն երկնային լոյսը,
Պայծառ է փայլում քան ոսկէ թագը,

Չէ որ շատ փառքեր անարատ կոյսը
Քնկած է տեսնում իւր ոտքի տակը:

Եւ իշխանական բոլոր գահերը,
Միմեանց վրա դարսած, արձան վեհութեան,
Չեն կարող հասնել լուսափայլ կոյսի
Երկնային փառաց վսեմ բարձրութեան:

Լա-Հիրը առաջարկում է խնդրել թագաւորին, որ նա վճռէ այդ հարցը: Իսկ կոմսը պատասխանում է. «Նա, որ Ֆրանսիայի համար ազատութիւն է ձեռք բերել, պիտի ազատ կերպով ինքն վճռէ իւր սրտի հարցը»:

Այդ ժամանակ մօտենում է ինքն թագաւորը և նրա հետ Սօրէլը, Դիւ-Ղատէլը և Բուրգունդիայի դքսի կողմից ուղարկուած ասպետը: Վերջինս եկել է ողջունելու թագաւորին դքսի կողմից և հաշտութեան մասին բացատրութիւններ տալու: Թագաւորը պատրաստ է սիրով ընդունելու իւր բարեկամին և համաձայն է հաշտութեան բոլոր պայմանների հետ: Զուտով գալիս է և դուքսը, որին ամենքն ընդունում են ուրախ սրտով: Թագաւորը իւր կողմից ամեն կերպ աշխատում է, որ անցեալը բոլորովին մոռացութեան տրուի: Այդ ըօպէին յայտնում է Աննան և համոզում է դքսին, որ հաշտութիւնը կատարեալ անելու համար, ներէ Դիւ-Ղատէլին: Պոյսը հրամայում է ներս կանչել Դիւ-Ղատէլին, որին դուքսը մեկնում է իւր ձեռքը: Այդպիսով ներքին երկպառակտումները վերջացած տեսնելով, թա-

գաւորը հարցնում է Աննային, թէ արդեօք այդ բարեկամական կապը միշտ կը պահպանուի: Այսը սկզբում կանգ է առնում, երևի չը կամենալով անախորժ պատասխան տալ, ապա իւր խօսքին խրատական ձև տալով ասում է.

Դ՛նձք թագաւորներ, դ՛նձք տիրապետներ,
 Զգուշացնում եմ ձեզ երկպառակտումից,
 Կռուի չ'աստուածը թո՞ղ քնէ իւր որջում.
 Թէ գարթնէ, չետոյ չէք պրծնիլ ձեռքից:
 Նա մի երկաթեայ սերունդ է ծնում,
 Կրակը չէ հանգչում, հրդեհ է դառնում:
 Աւելին պատմել ձեզ չեմ կամենում,
 Հանդիստ եղէք և ուրախ ներկայում:

Ապա թագաւորը կամենալով վարձատրել հերոսուհուն՝ ազնուականութիւն է շնորհում նրան և խոստանում է գտնել նրա համար մի արժանաւոր ամուսին: Դէպքից օգտուելով Դիւնուան առաջարկում է իւր ձեռքը. նոյնը անում է և Լա-հիրը: Թագաւորը ուրախ է և թոյլ է տալիս, որ Աննան ինքն որոշէ, թէ նրանցից որին կարող է պարգևել իւր սիրտը: Հերոսուհին յայտնում է, թէ ինքն Ամենաբարձրեալ Աստուծոյ զինուորը լինելով, չէ կամենում ո՛չ մի մարդու կինը լինել: Բայց արքեպիսկոպոսը աշխատում է փոխել Աննայի միտքը, բացատրելով թէ կինը պարտաւոր է հնազանդել բնութեան, այսինքն անպատճառ մի այլ մարդուն պատ-

կանել: Նոյն միտքը արծարծում է թագաւորը ուրիշ խօսքերով: Այդ խրատներից Հերոսուհին անբաւական լինելով յանդիմանական ոճով պատասխանում է, խօսքն ուղղելով դէպի թագաւորը.

Արդէն ձանձրացա՞ր սուրբ յայտնութիւնից,
 Ար նրա անօթը փշրել ես ուզում,
 Անարատ կոյսն իւր բարձրութիւնից
 Հողին հաւասար դարձնել կամենում:
 Ո՛հ, դուք, կոյր սրտեր, թերահաւատներ,
 Փայլում է ձեր շուրջն լոյսը երկնքին,
 Ձեր աչքի առաջ կատարում հրաշքներ,
 Բայց որոնում էք ինձնում լոկ մի կին:

.
 Փողը թող փչեն պատերազմական,
 Խաղաղութիւնը ճնշում է հողիս,
 Սիրտս թռչում է ասպարէզ արեան,
 Ար իմ սրբազան նուիրուեմ գործիս:

Նոյն ըոպէին մի սուրհանդակ գալով յայտնում է, թէ թշնամին գետը անցնելով պատրաստում է յարձակում գործելու: Հերոսուհին ոգևորուած դուրս է թռչում և ամենքն հետևում են նրան: Մենք էլ թռչենք նրանց ետևից:

VI.

Մի ընդարձակ ծառազարդ դաշտում ընկած է ծանր վիրաւորուած Տալբօն, որը դառն կերպով գան-

գատուում է աշխարհային կեանքի ունայն ու խիստ փոփոխական լինելուց և հոգին աւանդում է: Յայտնուում է թագաւորը զօրապետների հետ միասին և տեսնելով Տալբօջի արիւնաշաղախ դիակը, գովում է հանգուցեալի անվեհերութիւնը, ապա հրամայում է տանել նրան թաղել և ապագայում մի արժանաւոր արձան կանգնեցնել նրա գերեզմանի վրա:

Այժմ տեսարանը փոխուելով, ներկայանում է մեզ պատերազմի դաշտի մի ուրիշ անկիւնը, ուր Ռէյմսի աշտարակները արևի ճառագայթներից լուսաւորուած են: Հերոսուհին հալածում է մի սևազգեստ զինուորականի, որը երեսին զիմակ է դրած: Երբ ասպետը կանգ է առնում, կոյսը մօտենում է նրան: Ասպետը շարունակ խոյս տալով հեռացրել է Աննային պատերազմի կենտրոնից, իսկ այժմ դառնալով դէպի նա, ասում է.

Հասար յաղթութեամբ Ռէյմսի դռներին,

Բաւականացիր այժմ քո փառքով.

Ղատ մի հաւատալ բաղդի բերմունքին,

Վր դաւաճանէ նա քեզ շատ շուտով:

Նայիր դու Ռէյմսի աշտարակներին,

2^է որ հասար քո սուրբ նպատակին.

Նայիր տաճարի պայծառ գմբէթին,

Չուտով կը պսակես քո թագաւորին:

Այժմ յետ դարձիր, զգուշացնում եմ քեզ...

Բայց հերոսուհին բարկանալով բացականչում է.

«Ասա ինձ, ո՞վ ես, թէ չէ կը սպանեմ»:

Սակայն սև ասպետը մի ակնթարթում դիմակը վերցնում է և ահա կազնած է կոյսի առաջ գեղեցիկ Լիօնէլը: Նա յարձակում է Աննայի վրա և մենամարտութիւնը սկսում է: Բայց հերոսուհին մի յաջող հարուածով վայր է գլորում հակառակորդի սուրը, խլում է նրա սաղաւարտը և պատրաստ է իսկոյն սպանելու: Բայց երբ նա սուրը բարձրացնում է Լիօնէլին սպանելու համար, յանկարծակի աչքը աչքին ընկնելով, կոյսը կանգ է առնում: Ջօրապետը շտապեցնում է նրան, խնդրելով չուշացնել մահաբեր հարուածը, բայց Աննան նշան է առնում ձեռներով, որ նա փախչէ: Սակայն Լիօնէլը չէ կամենում շնորհ ընդունել.

Ատում եմ քեզ և քո պարզւն ես,

Եւ չեմ կամենում շնորհ ընդունել.

Սպանիր թշնամուդ, որ ատելով քեզ,

Յանկանում էր ինքն քեզ սպանել:

Իսկ այդ նկատողութեան կոյսը հեղուկեամբ պատասխանում է.

«Սպանիր ինձ և փախիր»:

Ապա նկատելով, որ Փրանսիական զօրապետները մօտենում են, Աննան խնդրում է Լիօնէլին հեռանալ, ատելով.

Եթէ նրանք քեզ սպանեն, ես իսկոյն կը մեռնեմ:

Լիօնէլը հասկանում է, որ կոյսի սիրտը վառուել է նրա համար, ուստի կամենում է տանել նրան իւր հետ, բայց Աննան հրաժարում է: Զորապետը երգում է կրկին հանդիպել նրան և հեռանում է: Այդ բոպէին մօտենում են Ֆրանսիական զորապետները և աւետում են Աննային, թէ արդէն Ռէյմսի դռները բացուած են և զօրքը ներս ընդունուած, յաղթութիւնը կատարեալ է... բայց վշտահար հերոսուհին ուշաթափում է զօրապետի բազուկները վրա...

VII.

Տեսարանը ներկայացնում է մի շքեղ զարդարուած, ընդարձակ դահլիճ: Հեռուից լսում են երաժշտութեան ձայներ: Հերոսուհին խորատուգուած է իւր վշտացած սրտի ալիքների մէջ.

Ձէնքը հանգիստ է, կռիւը վերջացաւ,
Երգի ու պարի ժամը սկսեցաւ.
Նուագների ձայնից փողոցն է թնդում,
Անթիւ ճրագներից տաճարը փայլում:
Թարմ ճիւղերից կամար են հիւսում,
Ծաղկի փունջերով սիւներ զարդարում.
Ռէյմսի պատերը չեն տեղաւորում
Անթիւ հիւրերին, որ ներս են մտնում:

Ընդհանուր սիրով ամենքը վառուած.
Անվերջ ցնծութեամբ սրտերը լցուած:

Իսկ ինձ, որ այդ բոլոր փառքի ծնողն եմ,
Ձէ զրաւում ընդհանրական մեծ բաղդը,
Ուրախ տօնից խոյս է տալիս իմ սիրտը,
Եւ թռչում է դէպ' թշնամու բանակը:
Ասպարիզից ստիպուած եմ դուրս փախչելու՝
Կրճքիս տակի ծանր մեղքը ծածկելու:

Միթէ պիտի տղամարդի պատկերը
Իմ անարատ սրտի միջին ցուանայ:
Սա, երկնային մուանայով պարտքերը,
Աշխարհային սիրոյ համար թռթռայ:
Ես, որ բարձրեալ Աստուծոյ քաջ զինուոր եմ,
Մեր թշնամու սիրով պիտի հրապուրուեմ.
Ինչպէ՞ս պիտի արեգակին վեր նայեմ,
Եւ ամօթից կաթուածահար չը լինեմ:

Ապա լսելով հեռուից հնչուող մի մեղմ մեղեդի,
կոյսի սիրտը բոլորովին ճմլում է.

Աւաղ, վայ ինձ, ինչ հնչեւներ...
Միշտ նրա ձայնն եմ ես լուում,
Եւ շարունակ աչքիս առաջ
Լոկ նրա պատկերն եմ տեսնում:

Երանի՛ ինձ յափշտակէր
Պատերազմի փոթորիկը,
Իմ ականջին միայն հասնէր,

Կոտորածի խուլ աղմուկը:
 Իւր զօրութիւնն յետ ստանար
 Պարտամուռաց իմ բազուկը:
 Մինչ նազելի այդ մեղեղին
 Սնունդ է տալիս իմ խեղճ սրտին,
 Եւ վշտալի արցունքներով
 Կեանք ներշնչում նրա նուրբ լարին:

Ապա մի փոքր մտատանջուելուց յետոյ կոյսը նորից
 շարունակում է.

Բայց կարող էի սպանել նրան,
 Երբ ես այն այրող աչքին նայեցի.
 Նրան սպանէի... Ո՛չ, աւելի շուտ
 Կը ցանկանայի կորուստն իմ անձի:
 Ես յանցաւոր եմ, որ խնայեցի,
 Խղճիս լսեցի ու կարեկցեցի...

Սակայն Հերոսուհին իսկոյն գիտակցում է, որ այս-
 տեղ խնդիրը կարեկցութեան մէջ չէ.

Բայց կարեկցութիւնն ո՞ւր էր մնացել,
 Երբ ուրիշներին կոտորում էիր:
 Եւ քո նուրբ խիղճն ինչո՞ւ էր բթացել,
 Երբ քո ոտների մօտ տեսնում էիր
 Չոքած վալլիսցի քնքոյշ պատանին.
 Ինչո՞ւ ուշագիւր չ'եղար նրա ձայնին:
 Օ՛, նենգաւոր սիրտ, դու սճւտ ես խօսում
 Յաւիտենական լուսոյ առաջին.

Կարեկցութիւնը չէր քեզ ներշնչում,
 Երբոր նայեցիր նրա աչքի միջին:
 Ինչո՞ւ նայեցի սիրուն աչերին,
 Ինչո՞ւ տեսայ ես այն ազնիւ դէմքը,
 Հէնց այն բոպէին իսկոյն բուն զրին
 Յանցանքը սրտումս ու ծանր մեղքը:

Իմ հովաւական գաւազանը
 Ինչո՞ւ սրով փոխեցի,
 Օ՛, սուրբ կազնի, քո խօսքերը
 Ինչո՞ւ իզուր լսեցի:
 Ո՛հ, երկնային թագուհի,
 Ինչո՞ւ ինձ երևացիր,
 Ես արժանի չեմ թագիդ,
 Վէր առ նրան, յետ ստացիր:

Թէև տեսայ երկինքը բաց
 Սրբուածների լոյս-դէմքեր,
 Բայց իմ աչքը նայում է ցած,
 Երկնքին չեմ նուիրուած...

Ինչո՞ւ ինձ վրա բեռնեցիր
 Այդ կոչումն երկնային:
 Ինչպէս պիտի կարծրացնէի
 Փափուկ սիրտս երկրային:
 Զօրութիւնդ կ'ուզես յայտնել,
 Պէտք է անմեղ հոգիք ընտրել,
 Որ անմահ են, բայց չեն զգում,
 Որ արդար են, լաց չեն լինում:

Քնքոյշ կոյսին դու մի ընտրիր,
 Խեղճ հովուհուն մի ուղարկիր:
 Զատ իմ պէտքն է պատերազմը,
 Երկիրների կարգն ու կազմը:
 Լեռանց խաղաղ գազաթներում
 Գառներս էի արածացնում:
 Բայց իմ առաջ դու բացեցիր
 Իշխանական պալատները,
 Կոչումս դու որոշեցիր.
 Ինչո՞ւմն է ուրեմն իմ մեղը:

Այդ միջոցին ներս է մտնում Սորէլը և արտասուախառն ուրախութեամբ փաթաթուում է Աննայի վզով: Ապա փոքր մտքի գնալուց յետոյ ընկնում է նրա ոտներին, որքան էլ Աննան աշխատում է արգելել այդ: Սորէլը իրան անսահման երջանիկ է զգում և իւր երջանկութեան սկզբնապատճառը Աննային է համարում, ուստի կամենում է, որ նա էլ երջանիկ լինի: «Ո՛հ եթէ կարողանայիր կին լինել և զգալ — առում է Սորէլը ողևորուած: Մի կողմ դիր քո գէնքը, պատերազմը այլևս չկայ, վերադարձիր դէպի քնքոյշ սեռը: Մի կողմը դիր քո գէնքերը, որովհետև սէրը վախենում է՝ պողպատով պատած կրճքին մօտենալ: Ո՛հ, կին եղիր և կը սկսես սէր զգալ: Իսկ Աննան պատասխանում է յուզուած.

Ա՛յժմ պիտի ես գէնքերս վայր դնեմ:
 Արեան դաշտում մահի առաջ դէմ կանեմ

Ես իմ կուրծքն: Եօթնապատիկ պղինձը
 Թող պաշտպանէ դեռ անձիս դէմ իմ անձը:

Սորէլը չը հասկանալով, թէ ինչ է նշանակում անձի դէմ անձը պաշտպանել, յեջեցնում է նրան կոմս Դիւնուայի սէրը ասելով. «Քեզ սիրում է կոմս Դիւնուան: Նրա ազնիւ սիրտը, որ մատչելի է միայն փառքի և հերոսական գործերի համար, վառուած է սուրբ սիրով դէպի քեզ.

Ախ, որքան քաղցր է սիրուել հերոսից,
 Որքան առաւել՝ սիրել հերոսին»:

Հերոսուհու վրա աւելի ազդելու համար, Սորէլը չէ թագցնում նրանից իւր սեփական սիրտը. «Իմ սիրտը զբաղեցնողը ոչ հայրենիքի փառքն է, ոչ ժողովրդի ողևորութիւնը և յաղթական ուրախութիւնն է, ոչ էլ գահի նորոգուած փայլը: Միայն մէկ բան կայ, որով լցուած է իմ բոլոր սիրտը: Միայն իմ սիրելիի սիրոյ համար տեղ կայ իմ սրտում»: Աննան հասկանում է նրան, որովհետև այժմ իւր սիրտն էլ նոյնանման դրութեան մէջ է, միայն թէ նրանք տարբերուում են իրանց վիճակով.

Բաղդաւոր ու երջանիկ ես դու, ս՛կ կին,
 Քո սիրելին սիրելի է ամենքին:

Այդ ազգային տօնը քո սիրոյ տօնն է
 Եւ ամենքը մասնակից քո զգացմունքին,

Քեզ համար են ցնծում բոլոր սրտերը,
Թարմ ճիւղերից պատրաստում պսակները:

Այդ միջոցին ներս են գալիս զորապետները,
Հերոսուհու գրոշակը բերելով և յայտնում են, թէ՛ նա
պիտի գրոշակը տանէ թագաւորի առջև: Հերոսուհին
սարսափի մէջ է ընկնում, երբ նայում է գրոշակի
վրա նկարած Աստուածամօր աչքերին.

Նա է, նա է, ուզիդ այդպէս երևաց:
Ինչպէս է նայում ինձ աչքերը յառած,
Եւ գայրոյթից ճակատը խիտ կնճռած:

Գալիս ես քո աղախնին պատժելու.

Ա՛ռ կայծակն ու հարուածիւր իմ գլուխը.

Ես իրաւունք չունեմ այլևս ապրելու,

Որովհետև պղծել եմ քո անունը...

Այնուամենայնիւ զորապետների պահանջից ստի-
պուած, բոլորովին ակամայ վերցնում է գրոշակը
և դուրս գնում: Ամենքը հետևում են նրան:

VIII.

Այժմ բացւում է մեր առաջ տաճարի ընդար-
ձակ հրապարակը: Խուռն բազմութեան մէջ նկատ-
ուում է գիւղացի Բէրտրանը կոյսի փեսաների և
քոյրերի հետ, որոնք հեռու տեղից եկել են թա-
գադրութեան տօնին մասնակցելու և Ուրէանի կոյ-

սին տեսնելու, որը ենթադրաբար իրանց կորած քոյրը
պիտի լինի: Նրանք յարմար տեղ են որոնում, որ
թափորը անցնելուց կարողանան տեսնել Աննային:
Եւ ահա գալիս է թափորը թագադրական մարշի
մասնակցութեամբ: Թափորի մէջտեղում գրոշակը
ձեռին գնում է Աննան թագաւորի առջևից: Քոյ-
րերը նկատում են նրան և ուրախ պարծենում են,
որ իրանց քոյրը այնպիսի մեծ փառքի է հասել:
Բայց ահա մի տխուր տեսարան: Յայտնուում է Տիբօն
սև զգեստ հագած և շատ տխուր: Նրան հետևում է
Բայմօնը, Աննային սիրող հովիւն, որը աշխատում
է Տիբօնին հանդարտացնել: Այն օրից որ Աննան անյայ-
տացել է, Տիբօն ընկել է ծանր հոգսի մէջ: Նա մի
գլուխ պնդում է, թէ իւր աղջկան մոլորեցրել
են չար ոգիները և թէ նա իւր բոլոր մեծ գործերը
կատարում է սատանայի զօրութեամբ, ուստի միջոց
է որոնում նրա «Հոգին» աղատելու, եթէ նոյն իսկ
մարմինը կորսուի.

Տեսնը դու, որպէս տատանւում էին նրա քայլերը,
Որպէս մթնկած ու տխուր էին նրա աչքերը,
Խղճուկը զգում է գրութիւնը իւր դժբախին,
Հասել է ըոպէն, որ ես ազատեմ իմ երեխային,

Ես կամենում եմ վրա հասնել նրան անսպասելի
Եւ վայր գլորել նրան իւր ունայն բազդից սոսկալի:
Ստիպելով պիտի յետ տանեմ դէպի իւր Տէր-Աստուածը,

Հոգին թող փրկուի, թէկուզ բնաւին կորցնէ անձը:

Բայժօնդը շատ է աշխատում փոխել Տիբօի միտքը, բայց չէ կարողանում: Այդ լուպէին դուրս է վազում Աննան եկեղեցուց առանց դրօշակի և այդ դէպքն էլ Տիբօն բացատրում է իւր նախապաշարուած մտքի համեմատ: «Նա գալիս է: Նա է, որ դուրս է փախչում Աստուծոյ տաճարից, սարսափը դուրս է քշում նրան սուրբ տեղերից, սա Աստուծոյ դատաստանն է, որ վրէժ է առնում նրանից»: Հերոսուհին խոյս տալով բազմութիւնից, մի կողմն է անցնում.

Ես չեմ կարող մնալ եկեղեցոյ մէջ.

Ոգիները ինձ դուրս են փախցնում,

Եւ երգեհոնի մեղմ հնչիւնները

Ինձ որոտմունքի ձայնի են փոխում,

Աստուծոյ տաճարի սուրբ կամարները

Կարծես իմ գլխին փլչել են սպառնում:

Դրօշակը թողի ես սրբարանում.

Պիտի նա չլինի երբէք իմ ձեռքում:

Ինձ թուաց, թէ ես տեսայ քոյրերիս,

Ո՛հ այդ ցնորք էր, երևաց աչքիս:

Սակայն հեռու են, հեռու իմ քոյրեր,

Որպէս մանկական իմ անմեղ օրեր...

Բայց երբ քոյրերն և բարեկամները ներկայանում են նրան և սիրով խօսակցում նրա հետ, Ան-

նան հաւատում է, որ ինքը երազի մէջ չէ, սակայն այժմ էլ նրան թւում է, թէ մինչև օրս երազի մէջ է եղած.

Ուրեմն բոլորն ունայն երազ էր,

Որ անցաւ զնաց իմ աչքի առաջ.

Բայց երազիցս ահա՛ զարթնեցի,

Ախ, այդ ծառի տակ որքան քնեցի:

Երազում էի ես այդ բոլորը,

Թագաւորներն և այդ զօրքերը,

Պատերազմները, յաղթութիւնները,

Որ ստուերի պէս սահելով անցան:

Չէ՛ որ հեռու չեմ ես մեր գիւղիցն,

Եւ անջատուած չեմ իմ քոյրերիցն:

Բայց երբ բարեկամները պնդում են, որ այդ բոլորը իսկութիւն է, Աննան բացականցում է.

Ես կը շարտեմ այդ զարդարանքը

Որ բաժանում է իմ սիրտը ձեզնից,

Հովուհի դառնալն է իմ բաղձանքը

Որ հեռու չլինեմ ես իմ քոյրերից:

Խօսակցութիւնն ընդհատուում է, երբ թագաւորը դուրս է գալիս եկեղեցուց: Նրան հետեւում են բոլոր իշխանները: Փողովուրդը համակրական բացականչութիւններ է անում, որից յետոյ թագաւորը մի փոքրիկ ճառ ասելով, շնորհակալութիւն

է յայտնում այն ամենքին, որ պատերազմին մասնակցել են, բայց շեշտում է, որ բոլոր յաջողութիւնը նրանք կոչւին են պարտական: Ապա դառնալով դէպի կոյսը, հարցնում է թէ ինչով կարող է ուրախացնել նրան: «Իսկ եթէ դու երկնքիցն ես—աւելացնում է թագաւորը—ապա թոյլ տուր տեսնել քեզ քո լուսեղէն տեսքի մէջ, ինչպէս լինում ես երկնքում, որպէս զի մենք երկրպագենք քեզ»: Հէնց այդ վայրկեանին մօտ է գալիս թագաւորին Տիբօն և դառնալով դէպի նա, բացականչում է. «Գու կարծո՞ւմ ես, թէ քեզ աստուածային զօրութիւնն է ազատել: Խաբուած իշխան: Կուրացած ժողովուրդ: Գու ազատուել ես սատանայի արուեստով»: Ամենքը սարսափած յետ են քաշւում: Տիբօն դառնալով դէպի իւր աղջիկը ասում է, «Պատասխանիր ինձ յանուն Երրորդութեան. Մի՞թէ դու պատկանում ես սուրբերի և անարատների դասակարգին»: Աննան կատարեալ լուութիւն է պահպանում: Զօրապետները և Սօրէյը խնդրում, աղերսում են նրան, որ հերքէ Տիբօնի չարախօսութիւնները, բայց կոյսը չէ կամենում մի բառ անգամ արտասանել իւր հօր դէմ: Այդ ծանր ընդդէմն մի քանի անգամ որոտմունք է լսում, որը ընդունում են իբր երկնային վկայութիւն Տիբօնի ասածին: Ուտի ամենքը վախեցած ցրւում են: Թագաւորն էլ հեռանում է իշխանների հետ միասին: Միայն կոմս Գիւնուան յետ մնալով, խնդրում է Աննային, որ թոյլ տայ օգնել իրան, բայց պատաս-

խան չը ստանալով ստիպուած է լինում հեռանալ: Փոքր ինչ յետոյ Գիւնուանը նորից ներս է գալիս և յայտնում է, թէ թագաւորը ամենաողորմածաբար թոյլ է տալիս, որ Աննան առանց պատժուելու և մի վնաս կրելու իսկոյն և եթ դուրս գնայ քաղաքից: Բայմօնդը մեկնում է իւր հովւական ձեռքը մէնակ մնացած խեղճ աղջկան և վհատած հերոսուհին հեռանում է...

IX.

Սարսափելի փոթորիկ է: Մի խոր անտառի մէջ հանդիպում ենք մենք մի ածխագործի, որը խրրճիթի առաջ կանգնած գանգատում է իւր կնոջ մօտ, թէ այդպիսի սարսափելի փոթորիկ նա երբէք չէ տեսել: Երկինքը սաստիկ որոտում է, բայց ժամանակ առ ժամանակ, երբ որոտմունքը հանդարտում է, լսում է հրացանի կամ թնդանօթի ձայն: Անտառի շրջակայքում դէմ առ դէմ կանգնած են երկու իրար թշնամի զօրքերը: Այդ միջոցին յայտնում են Աննան և Բայմօնդն, որոնք երեք օր քաղցած ու ծարաւ թափառելուց յետոյ այժմ փոթորիկից ազատուելու համար մի անկիւն են որոնում: Ածխագործի կինը բերում է Աննայի համար մի գաւաթ կաթ: Տարաբաղաբար նոյն ընդդէմն գալիս է քաղաքից ածխագործի որդին: Նա իսկոյն ճանաչում է Աննային և խլում է նրա ձեռքից հաղիւ պռօշների կպած

կաթի զաւաթը, աղաղակելով. «Մայր, մայր, այդ
հում էք հիւրասիրում. չէ որ սա Օրլէանի կախարհն
է»: Ածխագործը և իւր կիներ խաչակնքում են
երեսները և փախչում:

Այդ դէպքից վհատած, Աննան յորդորում է
Բայմօնդին՝ մենակ թողնել իրան, քանի որ անէծքը
հալածում է իրան և ամենքը փախչում են իրանից:
Բայմօնդը չէ ուզում սիրուհուն մենակ թողնել, բայց
այդ մի հատիկ մարդն էլ, որ այժմ կոյսի միակ
մտերիմն էր, իւր սրտում վատ կարծիք ունի նրա
մասին և ահա թէ ինչ խրատ է կարգում նրա
գլխին.

Չէք կամենում դուք նորից ուշքի գալ,
Չեր Աստուծոյ հետ կրկին հաշտուել,
Ապաշխարել ու ձեր մեղքը զղջալ,
Սուրբ եկեղեցոյ ծոցն ընդունուել:

Արպէս խոցւում է անմեղ հերոսուհու սիրտը այդ
դառն նկատողութիւններից.

Ախ, Բայմօնդ, դու ես միակ էակը,
Ար հաւատարիմ ընկեր ես մնացել,
Երբ արտաքսել է ինձ ամբողջ աղզը,
Եւ իմ գործերն իսպառ ուրացել:
Գու էլ ես փնտրում իմ մէջ չար ոգոյն.
Ախ այդ ծանր է շատ, ծանր է իմ հոգոյն:

Աննայի խօսքերից Բայմօնդը համոզւում է նրա ան-
մեղութեան մէջ: Աննան վերջացնում է իւր խօսքը
հետեւեալ կերպով.

Ո՛չ, թշուառ չեմ ես, որպէս կարծում ես,
Թիրութիւն ունեմ, բայց անբաղդ չեմ ես:
Թէև հալածուած, երկրից աքսորուած.
Անապատի մէջ ուշքի եմ եկած:
Երբ փառքի շողքով դեռ փայլում էի,
Վէճ կար իմ սրտում, նախանձում էի...
Այդ փոթորիկն օդը մաքրեց,
Իմ փոթորիկն էլ իմ սիրտը սրբեց:
Թող լինի այժմ, ինչ լինելու է,
Սիրտս անվրդով ընդունելու է:

.
Տեսնում ես ահա մայր մտաւ արև,
Բայց հաստատ է, որ իւր պայծառ փայլով
Վաղը նա կրկին կը տալ մեզ բարև.
Նոյնպէս հաստատ է, որ մի օր կլինի
Ճշմարտութիւնն ամենքին յայտնի:

Հաղիւ խօսքը վերջացրած, Աննային շրջապա-
տում են թշնամու զինուորները, որոնք Իզաբո թա-
գուհուն ուղեկցում էին դէպի բանակը: Թագուհին
հրամայում է տանել կոյսին Լիօնէլի մօտ: Ճանա-
պարհին հերոսուհին աշխատում է համոզել զինուոր-
ներին, որ սպանեն իրան, փոխանակ Լիօնէլի մօտ

տանելու: Բայց զինուորներն բարուք են համարում կատարել իրանց թագուհու հրամանը:

X.

Այժմ տեսնենք, թէ ինչ է կատարում Ֆրանսիական բանակում: Երբ տարածուեց այն լուրն, իբր թէ կոյսը միայն մի կախարդ է եղած և ասորուած է թագաւորի կողմից, թշնամին կրկին սիրտ առաւ և սկսեց նեղը գցել Ֆրանսիացիներին: Գրութիւնը վատացաւ մանաւանդ այն պատճառով, որ կոմս Գիւնուան չէր կամենում մասնակցել պատերազմին, անբաւական լինելով թագաւորից, որ նա անարգար կերպով աքսորեց հերոսուհուն: Բայց ահա կոմսի մօտ շտապով գալիս է Բայմօնդը և բացատրում է թէ նրա կատարելապէս անմեղ լինելը և թէ գերի ընկնելը: Թագաւորն և բոլորեքեան սկսում են հաւատալ, որ իրանք սխալուած էին հերոսուհու վերաբերմամբ և շատ ցաւում են նրանից զրկուելու պատճառով: Իսկ կոմսն ի նկատի ունենալով իւր սիրեցեալի գերի ընկնելն, իսկոյն ոտքի է կանգնում և որոշում է նոյն օրն և եթ ազատել նրան թշնամու ձեռքից:

XI.

Հերոսուհին բանտարկուած է մի անմատչելի ամրոցում: Լիօնէլը և Իգաբօն ներկայ են: Ամրոցը

շրջապատուած է ամբոխով, որը պահանջում է որ առանց այլ և այլի սպանեն կախարդին, սպառնալով հակառակ դէպքում ամրոցը քարուքանդ անել: Զօրապետներից մէկը խորհուրդ է տալիս Լիօնէլին կտրել Աննայի գլուխն և ներքև գլորել ամբոխի առաջ, որ նա հանդարտուէ: Բայց Լիօնէլը յորդորում է հերոսուհուն համաձայնել իրան պատկանելու, ըստ որում խօսք է տալիս պաշտպանելու նրան թէկուզ ամբողջ աշխարհի դէմ: Իսկ հերոսուհին պատասխանում է.

Թշնամի ես դու թէ ինձ թէ ազգիս,
Ուստի տիրանալ չես կարող սրտիս,
Բայց թէ քո սիրտը հակուած է դէպ' ինձ,
Թող սա օրհնութիւն բերէ ամենքիս:
Դ՛նւրս տար զօրքերդ իմ հայրենիքից,
Բանալիները յետ փուր անյապաղ,
Եւ գերիներին իսկոյն արձակիր,
Բոլոր վնասը ազգիս հատուցիր,
Ապա կը ստանաս ինձնից թողութիւն
Եւ թագաւորիս անուամբ հաշտութիւն:

Իգաբօն զարմանում է, որ Աննան շղթաների մէջ կամենում է օրէնքներ տալ իրանց: Իսկ Աննան շարունակում է.

Հրամանս իզուր մի յետաձգել,
Քանի որ վաղուշ պէտք է կատարել.

Յտարի շղթան երբէք չէ կարող
Ազատ ֆրանսիացու ձեռքը կաշկանդել:

Խօսակցութիւնը ընդհատուում է մի զինուորականի ներս վազելով, որը յայտնում է Լիօնէլին, թէ ֆրանսիացիք մեծ բազմութեամբ յարձակում են դործել: Լիօնէլը յանձնում է կոյսին իզարօի հսկողութեան, իսկ ինքը գնում է: Իզարօն սուրը մերկացրած պատրաստ է պահում, որ եթէ ֆրանսիացիք յաղթող հանդիսանան, իսկոյն սպանէ: Աննային: Բայց հերոսուհու համար իզարօյի սուրը սարսափելի չէ: Նա շղթաների մէջն էլ ոգևորուած է իւր հայրենիքով:

Յառնջ իմ քաջեր, յառնջ անվեհեր,
Անարատ կոյսր հեռու չէ ձեզնից,
Թէև ձեռներին ծանր շղթաներ,
Թուջում է հոգով դէպ' ձեզ իւր բանտից,
Պատերազմական երգի թւերով:

Իզարօն հրամայում է մի զինուորի կանգնել աշտարակի գլխին և շարունակ տեղեկութիւն տալ իրան պատերազմի ընթացքի մասին: Այդ տեղեկութիւններին ուշադրութեամբ հետևում է և Աննան: Զինուորի ցուցմունքներից երևում է, որ ֆրանսիացիք հետզհետէ յաղթում են, կոմս Գիւնուան ծանր վէրք է ստանում: Այդ բոլոր ժամանակ Աննան դեռ համբերում է: Բայց երբ զինուորը յայտնում է թէ ֆրանսիացոց թագաւորը գերի ընկաւ, Աննայի համ-

բերութիւնը հատնում է, և նա մի անսպասելի ոյժ զգալով, խորտակում է իւր շղթան և մի զինուորի ձեռքից սուրը խլելով դուրս է թուջում:

Մի ակնթարթում կրակ դառած հերոսուհին գտնուում է պատերազմի կենտրոնում: Կոյսի յանկարծակի լոյս ընկնելը նոր ոգի է տալիս ֆրանսիացիներին և շփոթութեան մէջ է զցում թշնամիներին: Առևի ընթացքը բոլորովին փոխուում է: Թագաւորն ազատուում է կոյսի ձեռքով և ֆրանսիացիք յաղթող են հանդիսանում:

XII.

Այժմ արդէն հերոսուհին տեսնում է, որ իւր դուրը գլուխ է բերուած: Իսկ ինքն ծանր վէրք ստացած լինելով հանդիստ սրտով պատրաստ է մեռնելու: Թագաւորը ներողութիւն է խնդրում նրանից, որ սխալմամբ նրան կախարդ են համարել, մինչդեռ նա հրեշտակի նման սուրբ է: Աննան մխիթարուած բացականջում է.

Միթէ ճշմարիտ էլ ինձ չէ՞ն ատում,
Չէ՞ն վատաբանում և չէ՞ն անիծում,
Ինձ վրա բարի աչքով են նայում:
Այժմ տեսնում եմ ես պարզ բոլորը,
Ահա հարազատ իմ թագաւորը
Ահա ֆրանսիայի սուրբ դրօշակները,
Բայց ո՞ւր է արդեօք ծածանում իմր...

Թագաւորը հրամայում է բերել նրա դրօշակը: Եւ
հերոսուհին դրօշակը ձեռքն է առնում, երկինքը
կարմրագոյն փայլ է ստանում, և նա շարունակում է

Տեսնում էք ահա հրաշալի գոյներ,
Բացուեցին երկնից ոսկեղէն դռներ,
Ատուածամայրը լուսով է պատած,
Անմահ մանուկը սուրբ կրծքին կպած,
Եւ շուրջը կանգնած խմբեր հրեշտակաց:
Փպտալի դէմքով՝ իւր բազուկները
Մեկնել է դէպ՝ ինձ:

Ծանր գրահից գոյացան թւեր,
Երկիրը լետ մնաց, ես թռչում եմ վեր,
Կարճատե է ցաւն ու ըոպէական,
Ուրախութիւնը՝ յաւիտենական:

Վերջին խօսքը ասելուց Աննայի ձեռքից վայր
ընկնում դրօշակը և ինքն էլ անշնչացած փուռ
է նրա վրա:



1486

2013

« Ազգային գրադարան



NL0030749

